

2022

ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

*ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ  
7/7 հողամաս*

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ՄԵԶԻՔ ՌԵՍՈՐՏ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ 7/7 հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«ՄԵՋԻՔ ՌԵՍՈՐՏ» ՍՊԸ տնօրեն՝

Կ. Մարտիրոսյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2022

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	5
1.2	Հապավումներ .....	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	6
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	8
1.4.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i> .....	8
1.4.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i> .....	9
1.5	Էներգախնայողության միջոցառումներ.....	10
1.6	Գլխավոր հատակագիծ.....	11
1.7	Իրադրային հատակագիծ.....	12
1.8	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց .....	15
1.9	Ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար համակարգեր .....	16
2.1	Օդափոխության համակարգ.....	17
1.10	Գազամատակարարում.....	17
1.11	Էլ. մատակարարում.....	17
1.12	Կանաչապատման աշխատանքներ .....	17
1.13	Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ.....	18
2	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ .....	21
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	22
2.2	Նախապատրաստական փուլ .....	25
2.3	Շինարարության ժամկետները.....	25
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	25
2.5	Ժամանակավոր շինություններ .....	26
2.6	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	27
2.6.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i> .....	27
2.7	Թափոնների կառավարում .....	28
3	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	29
3.1	Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ .....	29
3.2	Տարածքի երկրաբանագեոմորֆոլոգիական բնութագիրը .....	29
3.3	Հիդրոերկրաբանական պայմանները .....	32
3.4	Տարածքի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական ընդհանուր բնութագիրը .....	32
3.5	Ջրագրություն .....	33
3.6	Կլիմայական պայմաններ.....	34

3.6.1	Օդերևութաբանական-կլիմայական պայմանները.....	35
3.6.1.1	Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը.....	35
3.7	Անտառ.....	42
3.8	Կենսաբազմազանություն .....	43
3.8.1	Բուսական աշխարհ.....	43
3.8.2	Կենդանական աշխարհ.....	44
3.8.3	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները .....	45
3.8.4	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....	46
3.9	Օդային ավազան .....	47
3.9.1	Ֆոնային աղտոտվածություն.....	47
3.10	Սոցիալ-տնտեսական արդի վիճակը.....	48
3.10.1	Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն .....	48
3.10.2	Արդյունաբերություն և առևտուր.....	50
3.10.3	Համայնքի զարգացման ծարգիր .....	50
3.10.4	Զբոսաշրջային ենթակառուցվածք.....	51
3.11	Բնության հուշարձաններ .....	53
3.12	Կենսաբանական հուշարձաններ.....	53
3.13	Բնական և մշակութային ժառանգություն .....	54
4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	73
4.2	Ռիսկերի գնահատում .....	73
4.3	Արտանետումների աղբյուրները .....	73
4.4	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	74
4.4.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	74
4.4.2	<i>Ջրային ռեսուրսներ.....</i>	74
4.4.3	<i>Հողային ռեսուրսներ .....</i>	75
4.4.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	75
4.4.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ.....</i>	76
4.4.6	<i>Աղմուկ և թրթռում.....</i>	77
4.4.7	<i>Թափոնների կառավարում.....</i>	77
4.4.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում.....</i>	78
4.4.9	<i>Էներգախնայողության միջոցառումներ .....</i>	78
5	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	78
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	80
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	84
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	86
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	87

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«Մեջիք ռեսուրս» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցեն`	ՀՀ ք. Երևան, Դ. Անհախթի փ. 2.23, 6 – րդ հարկ
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ 7/7 հողամաս
ՇՄԱԳ նախագծի մշակող`	Ա/Ձ Արամ Գալոյան
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ 7/7 հողամասում իականացնել Ռեստորանային համալիրի կառուցման աշխատանքները:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ռեստորանային համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան<sup>1</sup>:

Ռեստորանային համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),

<sup>1</sup> ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՈՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈՎԱՅՆԱՍԵՂԻՆԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
- Բնապահպանական եվ բնօգտագործման վճարների մասին (1998)
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԻՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 23 փետրվարի 2017 թվականի N 190-Ն որոշում
- ՀՀ կառավարության նիստի 23 փետրվարի 2017 թվականի N 8 արձանագրության քաղվածք
- «Կառավարության «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 2005թ.–ի հունվարի 20-ի N 64-Ն որոշում
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»

- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1 Ներկա վիճակի նկարագիր**

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ 7/7 հողամասում, Մ4 միջալեռական ավտոմոբիլային ճանապարհի հարևանությամբ: Հողամասի տրանսպորտային մոտեցումը ապահովված է, հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան կողմերից ճանապարհ է, իսկ մյուս կողմերից այլ անձանց տրամադրված հողեր:

Հողատարածքը ազատ է կառուցապատումից: Մոտակայքում այլ բնակելի կամ արտադրական շենք-շինություններ չկան:

Հողամասի հիմնական մակերեսը, համաձայն սեփականության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 11-003-0675-0067 կազմում է 0.72 հա:

- Ընդհանուր տեղեկություն հողամասի վերաբերյալ՝
- նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
  - գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
  - գրանցված իրավունքի տեսակը՝ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ երկրաբանական հետազննության արդյունքների տարածքը, ընդհանուր առմամբ, պիտանի է շինարարության համար:

Կառուցապատման ենթակա հողատարցքում բացակայում են բնութայն հատուկ պահպանվող կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ:

Հատակագծային սահմանափակումներ չկան:

Հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 0.2-0.5 մ է, տարածված է բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 1300մ<sup>3</sup>:



**1.4.2 Նախատեսվող գործունեության նկարագիր**

Նախագծվող ռեստորանային համալիրի գտնվում է Մարգ Տավուշ, համայնք Դիլիջան քաղաք Դիլիջան Պարզ լճի փողոց թիվ 7/7 հողամաս (վկայական N 23122021-11-0059) հասցեում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 7200 քմ:

Դեպի համալիր հետիոտն և մեքենաների մոտեցումը նախատեսվում է հյուսիս-արևելքից: Այն բաղկացած է ցուցասրահից, խոհանոցային բլոկից, բաց և փակ ռեստորանային սրահներից, բացօթյա բարից մեկ հարկանի փակ տաղավարներից և երեխաների համար նախատեսված բաց և փակ խաղահրապարակներից: Տարածքում մեքենաների կայանումը ապահովվում է բացօթյա կայանատեղիում:

Ցուցասրահում ներկայացվելու են հայկական խոհանոցային մշակույթի գործընթացները (լավաշի, գինու պատրաստում): Ցուցասրահի վերջում, դեպի վերև՝ բաց սրահ, ուղղորդող աստիճաններն են: 335.02քմ մակերեսով բաց սրահը (նիշ 3.90) սպասարկող բարը և դրան կից խոհանոցային մասը նույնպես գտնվում են 3.90 նիշում:

299.32քմ մակերեսով փակ սրահը (նիշ -2.70) ունի 6.3մ բարձրություն: Մեծ սրահ սպասարկող սանհանգույցները, հանդերձասենյակը, և ևս 4 օժանդակ սենյակները գտնվում են -3.00 նիշում: Իսկ խոհանոցը՝ -3.60 նիշում:

Թվով 15 մեծ և փոքր (39.99քմ-65.91քմ) տաղավարները տեղադրված են ըստ ռելիեֆի և ունեն հյուսիս-արևմուտք նայող պատշգամբներ: Դրանց մոտեցում իրականացվում է 2 հիմնական արահետներով: Տաղավարների սպասարկումը նախատեսվում է 0,00 նիշում գտնվող խոհանոցից: Այստեղ է գտնվում նաև համալիրը սպասարկող կաթսայատունը:

Համաձայն գլխավոր հատակագծի նախատեսվող կառուցապատումը զբաղեցնում է ընդհանուր հողամասի 47.26%-ը (3402.71 քմ) (որից՝ 1291,52 -ը բարեկարգումը և անջրանցիկ մակերեսներն են), կանաչապատումը՝ 52.74%-ը (3797.29 քմ):

Ռեստորանային համալիրի ողջ տարածքը նախատեսվում կանաչապատել և բարեկարգել:

Արտաքին երեսապատումը իրականացվելու է բազալտե սալերով, կոպտատաշ քարե շարվածքով և փայտով: Համալիրի տանիքները, հիմնականում հարթ և կանաչապատված են՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՎԱԾ Է ՀԱՄԱԶԱՅՆ

ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ


ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ  
ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

### 1.5 Էներգախնայողության միջոցառումներ


Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пенopleкс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

1.6 Գլխավոր հատակագիծ




1.7 Իրադրային հատակագիծ





Architecture & design





1.8 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՀՀ	Խումբը	Աշխատանքների անվանումները	Տևողությունը, օր	I տարի												II տարի				
				I տարի												II տարի				
				I ամիս	II ամիս	III ամիս	IV ամիս	V ամիս	VI ամիս	VII ամիս	VIII ամիս	IX ամիս	X ամիս	XI ամիս	XII ամիս	XIII ամիս	XIV ամիս	XV ամիս		
	2	3	10	11																
1	Ա	<b>Նախապատրաստական աշխատանքներ</b>	18	6																
		Շինարարական նախապատրաստական աշխատանքներ, ժամանակավոր ճանապարհների կառուցում, երկրաբաշխական ցանցի նշահարում, ժամանակավոր գույքային շինությունների տեղադրում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինարարակ																		
	I	<b>Տաղավարներ 1,2,3,4,5,6</b>																		
2	Բ	<b>Հողային աշխատանքներ</b>	30	6	6	6														
	Գ	<b>Երկաթբետոն կառուցվածքներ և շարվածք</b>																		
6		Երկաթբետոնե պարզունակների իրականացում	90	6																
10		Շարվածքային աշխատանքներ	90	6																
11	Դ	<b>Տանիքային աշխատանքներ</b>	30													6				
12	Ե	<b>Բացվածքների լրացում, հարդարում, հատակներ</b>	90													10				
	II	<b>Ռեստորան, բար, ցուցասրահ</b>																		
13	Բ	<b>Հողային աշխատանքներ</b>	48	6	6	6	6	6												
	Գ	<b>Երկաթբետոն կառուցվածքներ և շարվածք</b>																		
17		Երկաթբետոնե պարզունակների իրականացում	180	6																
21		Շարվածքային աշխատանքներ	150	6						8										
22	Դ	<b>Տանիքային աշխատանքներ</b>	66													6				
23	Ե	<b>Բացվածքների լրացում, հարդարում, հատակներ</b>	120													12				
	III	<b>Տաղավար 3 /3 հատ/, տաղավար 4, տաղավար 5 /2 հատ/</b>																		
24	Բ	<b>Հողային աշխատանքներ</b>	30													6				
	Գ	<b>Երկաթբետոն կառուցվածքներ և շարվածք</b>																		
25		Հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում	72																	
26		Ժայռաքանդակի հիմքերի իրականացում և ջրամեկուսացում																		
27		Երկաթբետոնե սյուների իրականացում																		
28		Երկաթբետոնե պարզունակների իրականացում		6																
29		Երկաթբետոնե ծածկի սալերի իրականացում																		
30		Այլ ե/բետոնե աշխատանքներ																		
31		Շարվածքային աշխատանքներ	90	6																
32	Դ	<b>Տանիքային աշխատանքներ</b>	30													6				
33	Ե	<b>Բացվածքների լրացում, հարդարում, հատակներ</b>	90													10				
34	Զ	<b>Ինժեներական ցանցեր</b>	252	6																
35	Ը	<b>Բարեկարգում և կանաչապատում</b>	162													6				
		<b>Ընդհանուր</b>	912																	

## 1.9 Ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար համակարգեր

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Պարզ լճի փողոց 7/7 հողամասում կառուցվող հյուրանոցային համալիրի շենքի նախագծի ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար կոյուղուհամակարգերի մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, գործող շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև Երևանի «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի /կցված հավելվածների բաժնում/:

Ջրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են արտաքին հետևյալ համակարգերը՝

1. Խմելու-տնտեսական;
2. Տնտ-կենցաղային կոյուղի
3. Հեղեղատար կոյուղի

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՇՈՒՄ 2.04.01-85

Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն ՇՈՒՄ 3.05.01-85

### 1. ԽՄԵԼՈՒ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐՄՈՒՂ

Համակարգը նախատեսված է ռեստորանային համալիրի շենքի խմելու-տնտեսական և հակահրդեհային կարիքների համար: Միացման տեղում նախատեսվում է հոր՝ կարգավորիչ փականով, տարածքում՝ ելս երկու հոր, մեկը ջրաչափական հանգույցով՝ D=50մմ ջրաչափով, իսկ մյուսը հակահրդեհային հիդրանտով:

Տարածքի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է 15լ/վրկ ջրի ծախս:

Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսված է իրականացնել պոլիէթիլենե Մ110x4,2 մմ, հորում՝ պողպատե էլեկտրաեռակցվող Մ108x4,0մմ տրամաչափի խողովակներից:

Ջրամատակարարման միացումն իրականացվում է տարածքից մոտ 140մ հեռավորությամբ անցնող d=200մմ տրամաչափի 14,0 մթն ճնշման տակ աշխատող պողպատե ջրագծից:

### 2. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ(Կ1)

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Շենքից կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակային ցանց, որտեղից քաղաքային կոյուղու համակարգ, համաձայն տեխնիկական պայմանի:

Թաղամասի ռեյիեֆը բարենպաստ է կոյուղու ինքնահոս համակարգ նախագծելու համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել D160-200մմ տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) խողովակներից:

Դիտահորերը նախատեսվում է իրականացնել կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից, սեյսմիկ գոտիների նամար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով:

Հորերի մաքսիմալ հեռավորությունը կախված կոյուղու տրամագծից 35-50մ է:

Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 1.4 մ միջին թաղման խորությամբ: Կոյուղու միացումն իրականացվում է տարածքից մոտ 850մ հեռավորությամբ անցնող d=1000մմ տրամաչափի կոլեկտորին գոյություն ունեցող հորում:



## 2.1 Օդափոխության համակարգ

Շենքի ս/հանգույցներից և լոգարաններից օդափոխությունը նախատեսված է բնական՝ հորանների միջով Մ125մմ և Մ100մմ օդատարերով:

Խոհանոցների արտաձման սարքերի համար նախատեսված են առանձին հորաններ:

Խոհանոցների արտաձման օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից, իսկ ս/հանգույցներից և լոգարաններից՝ պոլիէթիլենային խողովակներից:

Օդատարերի վրա, յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ, նախատեսված կարգավորիչ ճաղավանդակ՝ Ճ200 I Ճ150 I:

Խոհանոցից, սպասքի լվացման հատվածից, ճաշերի բաժանման մասից, ճաշարահներից, ինչպես նաև հյուրանոցային համարներից նախատեսված են մեխանիկական դրդամաք ներածման և արտաձման օդափոխության համակարգեր: Ներածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ, իսկ արտաձման համակարգինը՝ տանիքում:

Օդափոխության համար օգտագործվել են "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերի այլ համակարգերով:

Ներածումը և արտաձումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Ներածման համակարգի օդատարները ջերմամեկուսացվում են:

### 1.10 Գազամատակարարում

Ռեստորանային համալիրի գազամատակարարումն չի նախատեսվում:

### 1.11 Էլ. մատակարարում

Ռեստորանային համալիրի էլեկտրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով դիմել է «ՀԵՑ» ՓԲ ընկերությանը, համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

### 1.12 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ռոտզման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փուտերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջրի կմատակարարվի ավտոռոգիստերնով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Նախատեսվող ծառատեսակների ցանկ և քանակ՝

Սոճի – 55 հատ

Շիմշատ – 80 հատ

Բոդի – 25 հատ

Լորենի – 20 հատ

Հացենի – 8 հատ

Կաղնի – 15 հատ

Թխկի – 8 հատ

Գազոն – 3797.29 քմ

### 1.13 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{\text{ու.3}} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝  $S$  – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը և կանաչ տանիքի՝  $S_1 = 4171$  մ<sup>2</sup>,

$K$  – ոռոգման օրական հաճախականությունն է,  $K = 2$

$t$  - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է,  $t = 175$  օր

$$W_{u.3} = (0.006 \times 3797.29) \times 2 \times 175 = \underline{\underline{7974}} \text{ մ}^3/\text{տարի}$$

# Կանաչապատման սխեմա



## 2 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինարարական դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով<sup>ա</sup> բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« շենքի պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով<sup>ա</sup> գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության<sup>a</sup> անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 19 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է KB-405 մակնիշի աշտարակային կոունկ: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կոունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կոունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Աշտարակային կոունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կոունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կոունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը մատակարարվելու է շինհրապարակ պատրաստի տեսքով, մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ռոտզման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ստորև ներկայացվում է շինհրապարակի գլխավոր հատակագիծը:





## 2.2 Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Շինարարությունը նպատակահարմար է իրականացնել I,II,III հոսքերով, որոնց նկարագիրը և աշխատանքների ծավալները բերված են Աշխատանքների կատարման ժամանակացույցում:

## 2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության տևողությունը որոշվել է ըստ շինմոնտաժային աշխատանքների նորմատիվ աշխատատարության հաշվարկման և դրանց արդյունավետ համատեղման:

Շինարարության տևողությունը կազմում է **15** օրացուցային ամիս, կամ **450** օրացուցային օր:

Բանվորների առավելագույն քանակը **48** մարդ: Գումարային աշխատատարությունը կազմում է **10433,2** մարդ-օր:

## 2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոկռունկ	КС 55713-6 ГАЛИЧАНИН	2
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	JCB JS130LC	1
3	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	2
4	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
5	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	4
6	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	2
7	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	2

8	Եռակցման տրանսֆորմատոր	TД-500	2
9	Տոփանիչներ պնևմո		2
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	4
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	СВ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

**2.5 Ժամանակավոր շինություններ**

Շինհրապարակում կտեղադրվեն հետևյալ ժամանակավոր շինությունները: Շինությունների տեղադիրքը կհստակեցվի նախագծային աշխատանքների ընթացքում:

N	ՆՆՎԱՆԱՑՆԱԿ
1	2
1	Պահակակետ
2	Ամրանի և փայտանյութի պահեստ
3	Քարի և սալիկների պահեստ
4	Սորուն նյութերի պահեստ
5	Գրասենյակ, բուժկետ
6	Հանդերձարան
7	Զուգարաններ
8	Ճաշարան
9	Ցնցուղարան

2.6 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Աղյուսակ 3

Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Փոսորակի մշակում	մ <sup>3</sup>	3100,0
2	Հետլիցք	մ <sup>3</sup>	1050,0
3	Ե/բ հիմքեր	մ <sup>3</sup>	330,0
4	Ե/բ սյուներ	մ <sup>3</sup>	98,0
5	Ե/բ պարզունակներ	մ <sup>3</sup>	123,0
6	Ե/բ ծածկ	մ <sup>3</sup>	492,0
7	Ե/բ պատեր	մ <sup>3</sup>	120,0
8	Պատերի շարվածք	մ <sup>3</sup>	1200,0
9	Ամրանավորում և ներդիր դետալներ	տ	165,0

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տեղանքի բարեկարգման և հարթեցման համար:

**2.6.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Ռեստորանային համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

$N$  – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$  – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 48 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 450 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 48 \times 0.025) \times 450 = 561.59 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.248 \text{ մ}^3/\text{օր:}$$

**բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

$K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 500 \times 0.0015 \times 300 = 225 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 786.59 մ<sup>3</sup>/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Ջրցանի, բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

**2.7 Թափոնների կառավարում**

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060001004	960 մ <sup>3</sup>
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	1050 մ <sup>3</sup>
3.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.8 տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Ռեստորանային համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**3 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ**

**3.1 Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ**

Ուսումնասիրված տարածքը գտնվում է Աղստն գետի միջին հոսանքում և աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով և լեռնային բազմաբնույթ ռելիեֆով: Քաղաքի անտառապատ լեռնալանջերը, մեղմ կլիման, հանքային աղբյուրների, ճարտարագիտական հուշարձանների առկայությունը ստեղծել են բարենպաստ պայմաններ հանգստի, առողջարարական և այլ նպատակային համալիրներ կառուցելու համար:

**Լեռնագրությունը:** Դիլիջանի գետահովիտը զբաղեցնում է Աղստն գետի միջին հոսանքի ավազանը: Հարավից նա շրջապատված է Փամբակի և Արեգունի լեռնաշղթաներով, իսկ հյուսիսից՝ Գուգարքի լեռների համակարգով: Աղստն գետի աջափնյա մասում, որտեղ գտնվում են ուսումնասիրված տարածքները, հանդիսանում են Փամբակի լեռնաշղթայի հարավ-արևելյան եզրամասի հյուսիսային ուղղվածության ճյուղավորությունները:

**Ջրագրությունում** գլխավոր դերը պատկանում է Աղստն գետին, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայից 3000մ բացարձակ բարձրությունից: Ուսումնասիրված տարածքում գետի ջրավազանը ունի լեռնային ռելիեֆի բնույթ: Նրան շրջապատում են հարավից Փամբակի, իսկ հյուսիսից՝ Խալաբի լեռնաշղթաները: Գետի ջրային ռեժիմը բնութագրվում է զարնանային բարձր մակարդակով՝ գետավարարումներով, որը սկսվում է ապրիլ-մայիս ամիսների սկզբից, որից հետո ամառային-ձմեռային ամիսներին տեղի է ունենում գետաջրերի զգալի պակասեցում: Գետի ջրային ռեժիմի նման փոփոխությունը իր ազդեցությունն է թողնում տարածքի էկոզոն, պրոցեսների զարգացման վրա:

**Տարածքի սելյամիկությունը:** Մպիտակի երկրաշարժից հետո, Հանրապետության շատ տարածքներում, այդ թվում նաև ուսումնասիրվող տեղամասում, կատարվել են սելյամոշրջանացման աշխատանքներ, որոնց հիման վրա տվյալ տեղամասի սելյամիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.4g): Նշենք նաև, որ լանջային տեղամասերը, որոնք համեմատաբար կտրուկ թեքված են դեպի Աղստն գետի ժամանակակից հովիտը և որտեղ գրունտային ջրերը տեղակայված են համեմատաբար բարձր նիշերում (մոտ են երկրի մակերեսին), սելյամիկ տեսանկյունից գնահատվում են 9 բալից բարձր: Պետք է հաշվի առնել նաև տարածքի բարդ տեկտոնական կառուցվածքը և խախտումների առկայությունը, որոնք հատկապես հասում են տարածքի հնասողանքային լանջերը:

**3.2 Տարածքի երկրաբանագեոմորֆոլոգիական բնութագիրը**

**Գեոմորֆոլոգիական** տեսակետից տեղամասը տեղադրված է Աղստն գետի միջին հոսանքի սահմաններում, դրա աջակողմյան էռոզիոնա-հողմնահարման լանջերի ստորոտային մասերում, գետի կուտակումային ավազանին անցման գոտում: Տեղամասը դարավանդված է, որի արդյունքում ռելիեֆը համեմատաբար հարթ է փոքր թեքությամբ դեպի հյուսիս, գետի հունի կողմը: Տեղամասի հյուսիսային սահմանն անցնում է 5.0-8.0 մետր բարձրությամբ, մեծ և կտրուկ անկում ունեցող լանջի եզրով:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1213.0-1227.0 մետրի սահմաններում:

**Երկրաբանական պայմանները**

Կատարված աշխատանքների հիման վրա հետազոտվող տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը վերևից ներքև՝

**Շերտ թիվ 1** հողաբուսական ծածկույթ (լիցքային գրունտ), կավավազային կազմի, խճի, մանրախճի, հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ մինչև 10%, թփերի արմատներով:

**Շերտ թիվ 2** կավավազ դարչնագույն, մասամբ դեղնավուն և սպիտակավուն երանգով, երբեմն խճի և մանրախճի պարունակությամբ մինչև 10%, փոշենման ավազի նրբաշերտերով, և ոսպնյակներով, գրունտը փուխր է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-1.0 մետր:

Չորրորդականի հասակի դելյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

**Շերտ թիվ 3** կավ, ավազակավ դարչնագույն, շագանակագույն և գորշավուն երանգներով, պինդ թանձրության, մասամբ ստորին մասում խճի, հազվադեպ բեկորների պարունակությամբ, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, 3.0 մետրից խորը թեթև խոնավ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 3.5 մետր:

Չորրորդականի հասակի դելյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

**Շերտ թիվ 4** խճա-մանրախճային գրունտ հրաբխա-նստվածքային առաջացումներից (քայքաված պորֆիրիտ, տուֆոբեկչիա, տուֆոավազաքարեր) հազվադեպ բեկորներով կավավազա-ավազային լցանյութով մինչև 35%, տարածումը սահմանափակ է, բացահայտված հզորությունը՝ 0.5 մետր:

Չորրորդականի հասակի դելյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ:

Համաձայն կատարված աշխատանքների տվյալների հետազոտվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

—	հողաբուսական ծածկույթ	- շերտ թիվ 1
—	կավային գրունտներ	- շերտեր թիվ 2 և 3
—	խոշորաբեկորային գրունտներ	- շերտ թիվ 4

Հողաբուսական ծածկույթն (լիցքային գրունտ) ինժեներա-երկրաբանական տեսակետից հետաքրքրություն չի ներկայացնում:

Ստորն աղյուսակում տրվում է հետազոտվող տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները, համաձայն նախկինում կատարված լաբորատոր փորձարկումների տվյալների, ըստ հրատարակված գրականության և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների՝

Հ/Հ	Ֆիզիկա-մեխանիկական հատկանիշի ցուցանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը			
			նորմա-տեխնիկական	նորմա-տեխնիկական	նորմա-տեխնիկական	նորմա-տեխնիկական
			1	2	3	4
1	Խտությունը, գ/սմ <sup>3</sup>	$\rho_0$	1.65	1.70	1.75	2.00
2	Ներքին շփման անկյունը, աստիճան	$\varphi$	—	16	18	32
3	Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	—	14	21	2
4	Դեֆորմացիայի մոդուլը, ՄՊա	$E_0$	—	12	12	18
5	Պայմանական հաշվարկային դիմադրությունը, ՄՊա	$R_0$	—	0.18	0.20	0.25
6	Ներքնակի գործակիցը (Кoэффициент постели) ա/մ <sup>3</sup>	$C_1$	—	1000	2000	4000
7	Գրունտի մշակման պարագրաֆը և կատեգորիան, ՇՆԵԿ IV-2-82,	աղյ. 1-1	9-վ	34-վ	8-գ/33-գ	13
		աղյ. 1-3	—	—	—	—
8	Գրունտի կարգը ըստ նրա սեյսմիկ հատկանիշների, ՀՀՇՆ 20-04		III	III	III	III

Նախագծվող կառույցների համար որպես հիմնատակի գրունտներ կարող են ծառայել կավային գրունտները (շերտ թիվ 3) և խոշորա-բեկորային գրունտները(շերտ թիվ 4):

Հարկ է նշել, որ բեկորային գրունտները բացահայտվել են միայն թիվ թիվ 8 և 10 հետախուզահորերում, որտեղ դրանց բացահայված հզորությունը կազմում է 0.2-0.4 մետր:

Հարկ է նշել, որ տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների ստույգ սեյսմիկ կարգն անհրաժեշտ է պարզել դաշտային գործիքային չափումների միջոցով:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները, փլուզում, սողանք, կարստ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կառույցի հիմքերի վրա, ներկա պահին բացակայում են: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ հնարավոր են էոզոիոնա-հոդմնահարման երևույթներ և պրոցեսներ մակերեսային ջրերի միջոցով, նմանատիպ երևույթներ դիտվում են հատկապես հորդառատ մթնոլորտային տեղումների և ինտենսիվ ձնհալի ժամանակ, թեքության լանջերի վրա, ուստի անհրաժեշտ է մշակել և իրականացնել մակերեսային ջրերի կանոնավորված և կազմակերպված ջրհավաք և ջրհեռ համակարգ:

Տեղամասի հյուսիսային հատվածում լանջն ունի մեծ և կտրուկ անկում 5.0-8.0 մետր բարձրությամբ: Հաշվի առնելով ռելիեֆի և երկրաբանական կտրվածքի կառուցվածքային առանձնահատկությունները շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է խստագույնս պահպանել գրունտների բնական թեքության անկյունները:

### 3.3 Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Պալեոգենի հասակի հրաբխանս տվածքային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են ճեղքա-դատարկությունների ջրերի տարատեսակներին, մասամբ Չորրորդականի հասակի բերվածքային առաջացումների համախմբերի շերտախմբերի հետ, որոնք պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին, որոնք փորված հետախուզահորերով մինչև 4.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 6.0 մետրից խորը: Մակայն հարկ է նշել, որ հատկապես ինտենսիվ ձնհալի և առատ տեղումների ժամանակ տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնկացող գրունտների ավազային և բեկորային ենթաշերտերում ձևավորվում են ժամանակավոր ջրային հոսքերի, ջրակալված և ջրհագեցած տեղամասեր:

### 3.4 Տարածքի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական ընդհանուր բնութագիրը

Ուսումնասիրված տարածքում արմատական ապարները նրկայացված են ներժայթքային ֆորմացիայով՝ գրանիտոիդներով և ենթահրաբխային ապարներով, որոնք միջին և վերին էոգենի հասակի են: Գրանիտոիդները հիմնականում ամուր, զանգվածային, իսկ առանձին տեղամասերում զգալի ճեղքավորված և հողմնահարված են: Ենթահրաբխային ինտրուզիաները ներկայացված են հիմնականում կվարցիտային պորֆիրիտներով, դացիտներով, կերատոֆիրներով և այլն: Ապարները հիմնականում ամուր, թույլ ճեղքավոր, հիդրոթերմալ փոփոխված են: Հանդիպում են տուֆոբրեկչիաներ, պորֆիրիտային բրեկչիաներ, տուֆաավազաքարեր, տուֆակոնգլոմերատներ: Մակերևույթային նստվածքները ներկայացված են երկու տեսակի ֆորմացիաներով՝ ա) լեռնալանջերի, բ) գետահովիտների:

ա) Լեռնալանջերի ֆորմացիան՝ ներկայացված է էլուվիալ-դելուվիալ ապարների համալիրով, հանդիպում են հիմնականում լեռնալանջերում և ներկայացված են ավազակավերով, կավերով, կավավազներով, որոնք ներփակված են արմատական ապարներից խիճերով և խճավազներով: Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը պայմանավորված է Ադստն գետի հովիտով, որն ունի ասիմետրիկ կառուցվածք և համաձայն Ա.Պ. Դեմյոխինի ունի մոտ 8 դարավանդներ: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի գետափնյա մասը (ոդոդադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ 10-15մ, երրորդ, չորրորդը և հինգերորդը՝ համապատասխանաբար ունեն 20-40 և 60-80մ բարձրություններ: Տվյալ դեպքում դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական պրոցեսներով, որոնք տեղի են ունեցել սկսած էոգենից մինչև ժամանակակից դարաշրջանը ներառյալ:

**Տարածքի ջրաերկրաբանական պայմանները.** Ուսումնասիրված և հարակից տարածքներում հայտնի են տարբեր տեսակի, տարբեր դինամիկայի և տարբեր քիմիական կազմի ջրեր: Նախկին ուսումնասիրողների կողմից կատարված ջրաերկրաբանական



աշխատանքների արդյունքների հիման վրա տարածքում դասակարգված են հետևյալ ջրատար հորիզոնները՝ (1) չորրորդական հասակի նստվածքներում, (2) նստվածքային և հրաբխանստվածքային ապարներում և վերջապես (3) պալեոգեն-նեոգեն հասակի ինտրուզիվ (ներժայթքային) ապարների հաստվածքում[1-2]: Ինչպես ցույց են տալիս նոր ստացված տվյալները ուսումնասիրված տեղամաս 2-ում հիմնականում առկա են առաջին դասին պատկանող ջրատար հորիզոններ, որոնք ներկայացված են ժամանակակից և չորրորդական նստվածքներով: Մասնավորապես, այդ հորիզոնները առկա են Աղստևի ալուվիալ-պրոլուվիալ նստվածքներում, որոնք ներկայացված են ճալաքարա-կոպճային, ավազային և կավավազային ապարներով: Նրանց տեղադրման խորությունը տարածքում տատանվում է մինչև 2,5-4,0մ: Ստորերկրյա ջրերը հանդիպում են տարածքի դելուվիալ-էլուվիալ ապարներում, որոնք տարածված են լանջային տեղամասերում հանդիպում են կավավազային, ավազակավային, ճալաքարային գրունտներում: Ջրերը այդ ապարներում ծակոտկեն-շերտային բնույթի են: Որպես ջրամերժ շերտ հիմնականում հանդիսանում է Դիլիջանի շերտախումբը: Առանձին դեպքերում ջրատար հորիզոնները զբաղեցնում են բավականին զգալի տարածքներ: Ջրատար հորիզոնները սնվում են հիմնականում ինֆիլտրացիոն ճանապարհով՝ թույլ տեկտոնական գոտիներով, սողանքային հաստվածքներով և տարբեր լիթոլոգիական կազմի ապարների կոնտակտներով (հպումներով): Ջրատար հորիզոնները տարածքի նստվածքային և հրաբխային-նստվածքային ապարներում բացակայում են:

**3.5 Ջրագրություն**

Աղստևը տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը, որոնցից առաջինը հոսում է Միափորի և Արեգունի լեռների միջև ընկած կիրճով: Խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր:

Երկարությունը 133 կմ է, այդ թվում Հայաստանում 99 կմ: Ջրի ծախսը՝ 8,22 խմ/վ, հոսքը 256 միլիոն խմ:

Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ:

ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Բերքաբերի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում՝ Աղստևի ջրամբարը4:

Գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալքից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով,

արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Աղստը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից /Թեժ լեռ, 3101մ/: Գետի երկարությունը 121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 քառակուսի կիլոմետր, իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն խորանարդ մետր: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից և առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Գետի վերին հոսանքն անցնում է Մարգահովիտի գոգավորությունով, որը նեղ կիրճ է, ապա ընդլայնվում է՝ հոսելով անտառածածկ խորը կիրճով, անցնելով Դիլիջան և Իջևան քաղաքների միջով: Այնուհետև գետը անցնում է հարթավայրով, հատում Հայաստանի սահմանը և թափվում Քուր գետը: Աղստի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստ գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրոկարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից

8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը զբաղեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ3, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ2: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տզրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա:

Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ2 է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակեր:

Գետն իր հոսքի ողջ երկայնքով խիստ աղտոտված է արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով: Կեղտաջրերն առանց մաքրվելու գետն են լցվում կոյուղու համակարգերից և չվերահսկվող աղբյուրներից: Օրական 18.000 մ<sup>3</sup> հզորությամբ կեղտաջրերի մաքրման կայանը ներկայումս չի գործում:

### 3.6 Կլիմայական պայմաններ

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումներն ավելի ցածր են, քան Երևանում՝ կազմելով -2.0°C հունվարին մինչև 18.2°C հուլիսին (Երևանում՝ համապատասխանաբար -4.1°C և 26.2°C), սակայն միջին տարեկան

ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Երևանում (համապատասխանաբար՝ 8.1°C և 12°C): Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա:

Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է 35%-ից գարնանը մինչև 12% ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ 100 մմ-ի, իսկ հունվարին՝ 12 մմ-ի:

Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593 մմ՝ երեք անգամ ավելին, քան Երևանում (200 մմ):

Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ (Երևանում՝ 2480 ժամ), իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%. Ձյունախախկույթի միջին բարձրությունը 18 սմ է (Երևանում՝ 2,5 սմ), իսկ առավելագույնը՝ 39 սմ (հյուսիսային լանջերին):

Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան (46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ (նույնն ինչ Երևանում): Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20 (Երևանում՝ 50 - 60):

### 3.6.1 Օդերևութաբանական-կլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է +34°C), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան -23°C): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 5.3°C, ամենաշոգ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝ +20.6°C, ամենացուրտ ամսվանը հունվարին՝ -8.5°C: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 109 մմ, նվազագույնը հունվարին՝ 27 մմ: Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 67 մմ է: Նոյեմբերի 5-ից դիտվում է կայուն ձնածածկ, որը վերանում է ապրիլի 18-ին: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 74 սմ է, նվազագույնը 3 սմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 73 %: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 3.1 մ/վրկ:

#### 3.6.1.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝ գ կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից և կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Չարմարավետությունը	Ամհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում.
2. Քամու արագությունը, վ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Չարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են «Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

Աղյուսակ 1.2. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	1256	-1.5	-1,0	2.2	7.7	12,0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Աղյուսակ 1.3. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների												Մի-ջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Դիլիջան	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60	

Աղյուսակ 1.4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ , մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելա- գույն տասնօրյա- կային բարձրու- թյունը, սմ	Տարվա մեջ ձնածած- կույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավե- լագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	53	57	103
	35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62			

Աղյուսակ 1.5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական տարեկան տարաբարությունը, մ/վ	Միջին տարեկան տարաբարությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			ըստ Միջին արագությունը, ուղղությունների մ/վ												20	50	100
			Հյուսիս-սային (Հս)	Հյուսիս-Արեվելյան (ՀսԱրլ)	Արե-վելյան (Արլ)	Հարավ-Արեվելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Դիլիջան	875,6	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2,1	1,8	4	20	22	24
			1,6	1,7	1,8	2,4	2,8	2,5	2,0	1,5							
		ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2,0					
			1,6	2,2	2,0	2,4	2,5	2,3	1,6	1,5							
		հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1,7					
			1,9	2,5	2,4	1,4	1,4	1,3	1,1	1,4							
հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1,5							
	1,7	2,2	1,9	1,7	1,9	1,7	1,4	1,4									

Աղյուսակ 1.6. Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ											Տարեկան գումարային	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	125	131	155	156	199	222	232	221	181	163	115	112	2012

Աղյուսակ 1.7. Անարև օրերի քանակը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների											Տարեկան	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	4	6	5	4	2	1	2	2	3	3	6	5	43



Աղյուսակ 1.8. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %			Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի				
	ամենացուրտ օրվա	ամենացուրտ հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակը եռյուրեմարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին մ/վ				
													ապահովվածությամբ, %	Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով ոչ բարձր, °C		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	-17	-15	-14	-12	-1,8	-23	10,4	73	178	201	63	51	155	47	Հվ	2,8
								-1,2	1,7	2,6						

Աղյուսակ 1.9. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ	
	Ապահովվածությամբ, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դիլիջան	24	25	38	24,4	11,7	77	60	484	62	ՀսԱրլ	2,5

### 3.7 Անտառ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Մրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսահայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Արեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաձ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փռշնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմրախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբավածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրագոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

### 3.8 Կենսաբազմազանություն

#### 3.8.1 Բուսական աշխարհ

Ըստ ՀՀ Ատլասի (2007 թ.) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքը գտնվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում

տարածված են դեղաբույսեր՝ այլճների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Veska*):

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունակ (*Lactarius*), սարդոստայնասունակ (*Cortinarius*), թելիկասունակ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունակ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունակ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունակ սովորական կամ կախասունակ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոզանկա), խուսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

### 3.8.2 Կենդանական աշխարհ.

#### Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (*Mollusca*) 69 և հողվածոտանիների (*Arthropoda*) 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (*Insecta*) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը, սանրաբեղ չրխկան-*Ctenicera pectinicornis*: Կարգավիճակը՝ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակը: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի »՝ VU B 1b, Ցախաքլորավոր-*Accipiter gentilis*: Կարգավիճակը՝ քիչ տարածված, նստակյաց տեսակը: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver.

3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VUB1 ab(iii) + 2ab(iii); D1

**Սողուններ**

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

**Կաթնասուններ**

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) –1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) –7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

**3.8.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները**

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողաձածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 1300 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

**3.8.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ**

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ միջատների բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ: Այլ կենդանիներ կառուցապատման ենթակա տարածքում չկան :

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

### 3.9 Օդային ավազան

#### 3.9.1 Ֆոնային աղտոտվածություն

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Դիլիջան համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Դիլիջան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 23700 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,3մգ/մ<sup>3</sup>, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ<sup>3</sup> և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ<sup>3</sup>:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿ<sub>փոշի</sub> = 0,15 մգ/մ<sup>3</sup>):

**Աղ. 3** Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ <sup>3</sup> )			
	Ընդհանուր փոշի	Մծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

**3.10 Սոցիալ-տնտեսական արդի վիճակը**

Համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններ: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովել բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն), ենթակառուցվածքների անխափան վիճակի (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) համար, ինչպես նաև հնարավորություն տալ բարելավելու էկոլոգիական իրավիճակը: Եթե համայնքի տնտեսությունը կարողանում է կատարել զարգացման համար նախատեսված ծախսերը համայնքի ներսում առկա կրթական, առողջապահական հաստատությունների, էկոլոգիական վիճակի, ենթակառուցվածքների կառուցման ու պահպանության վրա, ապա համայնքը զարգանում է որպես մեկ ամբողջական օրգանիզմ: Տնտեսությունը ստեղծում է հավելյալ արժեք, այն ծախսվում է համայնքի զարգացման վրա, իսկ համայնքն էլ ձեռնարկություններին ապահովում է որակյալ աշխատուժով, ենթակառուցվածքներով և այլ ռեսուրսներով:

**3.10.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն**

Դիլիջան համայնքը հանդիսանում է Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները: Ըստ ՀՀ պետական ռեզիստրի տվյալների համայնքում գրանցված է 795 ձեռնարկություն, որոնց թիվը աճել է 20-ով: Համայնքում գործունեություն են ծավալում 11 ֆինանսական կազմակերպություններ, որոնց թիվը կտրուկ աճել է Ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի և Կենտրոնական բանկի մասնաճյուղի կառուցումից հետո համայնքում կար 2 բանկի մասնաճյուղ:

Համայնքում գործող կազմակերպությունները ունեն հետևյալ բաշխվածությունը՝



- 795 միկրո ձեռնարկություն
- 78 փոքր ձեռնարկություն
- 1 միջին ձեռնարկություն
- 3 խոշոր ձեռնարկություն

Խոշոր կազմակերպությունները հիմնականում գործում են ֆինանսական և կրթական ոլորտներում: Համայնքում 2013թ.-ից գործում է ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը, 2014թ.-ից՝ «Դիլիջանի ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը: 2017թ.-ին համայնքում բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Վերը նշված կազմակերպություններում և համայնքում գործող ֆինանսական կազմակերպություններում աշխատում է մոտ 4,000 մարդ, որոնց 60%-ը չի հանդիսացել Դիլիջանի բնակիչ:

Համայնքում թույլ է զարգացած գյուղատնտեսության ոլորտը: Այստեղ գործում է ընդամենը 17 կազմակերպություն, որոնցից միայն մեկն է միջին չափի՝ «Դիլի» ՍՊԸ-ն, որն անասնապահական համալիր լինելուց բացի, զբաղվում է նաև պանրի արտադրությամբ: Այստեղ զբաղված է 16 մարդ:

Գյուղատնտեսությունը 2-րդ ամենախոստումնալից ոլորտն է զբոսաշրջությունից հետո: Իրականացվող ծրագրերի արդյունքում աճող մշտական բնակչության և զբոսաշրջիկների թվի աճին զուգահեռ, մեծանում է նաև գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչը ներկայումս ապահովվում է այլ շրջանների արտադրանքով:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Տարեկան համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի են ընկնում «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերի գործարանները, «Դիլիջան» գարեջրի գործարանը: Արդյունաբերության ոլորտում գործում է 88 կազմակերպություն:

Համայնքում գործում է մեկ բժշկական կենտրոն, որի կառավարումը հանձնվել է մասնավոր ընկերության: Բացի բժշկական կենտրոնից, համայնքում գործում են համայնքային ենթակայության 26 ընկերություններ՝ մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն և այլն: Համայնքապետարանում և նրա ենթակայության տակ գտնվող ընկերություններում աշխատում է 1700 մարդ, որը կազմում է ընդհանուր աշխատունակ բնակչության 21%-ը: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով, որն ունի ավելի քան 50 աշխատակից, համայնքում իրականացվում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ:

Համայնքում գործում են նաև մի շարք փոքր և միջին կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում 568, տրանսպորտային ծառայություններ 12, անշարժ գույքի գործակալություններ 14, շինարարական 19, հանքարդյունաբերական և քարի վերամշակման 66 և այլն:

### 3.10.2 Արդյունաբերություն և առևտուր

Դիլիջանը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով, որոնք արդեն իսկ 19-րդ դարի վերջից բազմաթիվ հանգստացողներ են գրավել դեպի քաղաքի առողջարանները: Ներկայումս այդ հանքային ջրերը շտապվում են «Դիլիջան» հանքային ջրերի գործարանում, որը հիմնադրվել է 1947թ.-ին և հանդիսացել է ոչ միայն Հայաստանում, այլև ԽՍՀՄ ողջ տարածքում հանքային ջուր շտապնող ձեռնարկություններից առաջիններից մեկը: Գործարանը տարեկան արտադրում է ավելի քան 8 մլն. շիշ աղբյուրի հանքային ջուր:

### 3.10.3 Համայնքի զարգացման ծարգիք

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝ Դիլիջան համայնքը միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն է, բարձր կենսամակարդակ և զբաղվածություն ունեցող բնակչությամբ: Համայնքը տարածաշրջանային ֆինանսական, կրթական կենտրոն է, որտեղ մատուցվում են հանրային որակյալ ծառայություններ:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

1. Էկոտուրիզմի զարգացման ենթակառուցվածքների ստեղծում և նոր արդյունքների ձևավորում:
2. Աշխատուժի հմտությունների զարգացում և համապատասխանեցում շուկայի պահանջներին:
3. Զբոսաշրջային արդյունքների ներկայացում և առաջնորդում միջազգային հարթակներում:

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները:


Գործողությունների, աշխատանքների ստեղծման և ներդրումային հնարավորությունների առումով Դիլիջանի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը: Հիմնվելով համայնքի տնտեսության վերլուծության վրա, ՏՏԶ պլանի նպատակն է բարելավել բնակչության ապրուստի պայմանները՝ խթանելով համայնքի տնտեսական և տուրիստական զարգացումը: Զարգացնել գյուղական բնակավայրերը, վերածելով գյուղական տուրիզմի կենտրոնների: ՏՏԶ պլանը առանձնացնում է ներդրումային հնարավորություններն այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ տուրիզմը, կրթությունը, ինչը կարևոր խթան կհանդիսանա տեղական տնտեսության զարգացման հարցում: Այս տնտեսական ճյուղերին

ինստիտուցիոնալ աջակցությունը համարվում է համայնքի հիմնական զարգացման կայուն ռազմավարություն: Ընտրված ռազմավարական ենթակառուցվածքային ծրագրերի ընտրությունն ու իրագործումն անհրաժեշտ են՝ բարելավելու՝ տուրիզմի զարգացման համար:

**3.10.4 Զբոսաշրջային ենթակառուցվածք**

Համայնքների համաչափ կայուն զարգացմանը միտված և տարաբնակեցման համակարգի հավասարակշռման նպատակով առաջադրվող աճի բևեռների կլաստերի համար նախագծի շրջանակում առաջարկվում է նաև կլաստերի միջուկում/բաղկացուցիչներում նախատեսել զարգացման խթան՝ ճանապարհամերձ զբոսաշրջային համապարփակ մոդուլների ներդրում:

Վերջիններիս համար բաղադրիչների ընդհանրությունից բացի կլինի որոշակի «մասնագիտացվածության» տարբերություններ ևս, ելնելով տարածաշրջանների ընդհանուր տնտեսական ուղղվածությունից և գոյություն ունեցող և հեռանկարային կոնկրետ ռեսուրսային պոտենցիալից:



Ընտրված տիրույթներում տարածաշրջանային տնտեսական աճ

- Արձագանք տարածաշրջանային գործարար համայնքների կարիքներին
- Տեղական, ազգային և համայնքային ֆոնդերի (մասնավորապես՝ կառուցվածքային հիմնադրամների) մոբիլիզացում՝ սահմանված տարածաշրջանային «գործողությունների ծրագրեր»-ի իրականացնելու համար:

Զբոսաշրջությունը Դիլիջանում հիմնականում կրում է սեզոնային բնույթ: Քաղաքում զբոսաշրջային սեզոնը տևում է ապրիլի կեսից մինչև հոկտեմբերի կեսը, ընդ որում հունիս, հուլիս և օգոստոս ամիսները համարվում են պիկային: Զբոսաշրջությունն աշխուժանում է նաև դեկտեմբերի 30-ից հունվարի 9-ն ընկած երկշաբաթյա ժամանահատվածում՝ կապված ամանորյա տոների հետ:

Ներկայումս Դիլիջանը չունի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն:

Քաղաքում առկա են տեսարժան և զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող մի շարք վայրեր.

- «Թուֆենկյան Հին Դիլիջան» համալիրը՝ վերակառուցված ու բարեկարգված պատմական թաղամասում: Ներկայումս գործում է որպես հյուրանոց՝ ռեստորանով և փոքր խանութով.
- «Դիլիջան» ազգային պարկը՝ 14 հետիոտն երթուղիներ (տես ազգային պարկին նվիրված գլուխը).
- Աղասի Խանջյանի ամառանոցը, կառուցվել է 1936թ.-ին, մասնավոր սեփականություն է, ներկայումս գտնվում է ավերված վիճակում.
- «Մատինովի աղբյուր» հուշաղբյուրը, կառուցվել է 1880թ.-ին գինեվաճառ Մատինովի կողմից.
- «Անտառի արքա» քանդակը, գտնվում է Ա. Խանջյանի ամառանոցի տարածքում: Քանդակագործ՝ Ա. Սարգսյան.
- Հայրենական մեծ պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 1975թ.-ին: Հեղինակներ՝ ճարտարապետ Խ. Վաթինյան, քանդակագործ Ս. Մեհրաբյան.
- Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակին նվիրված հուշարձանը, հեղինակներ՝ Խ. Վաթինյան, Ա. Թարխանյան, Ս. Ավետիսյան.
- Արցախյան ազատամարտում զոհված դիլիջանցիների հիշատակին նվիրված հուշարձանը, ստեղծվել է 2006թ.-ին Արմեն Աբգարյանի հովանավորությամբ:

3.11 Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14 N967-ն որոշմամբ Տավուշի մարզի տարածքում հաստատվել են բնության ութ հուշարձաններ.

1.	Կովասարի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարազաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարազաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարազաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
2.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Մաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարազաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք
3.	«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
4.	«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին
5.	«Պլագիոզոբանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա
6.	«Քվարցային	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին,
7.	պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում
8.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
